

ՀՏԴ 622:347.249

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԼԻԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ԴՎԿԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվում և վերհանվում են ՀՀ ընդերքօգտագործման ոլորտում քաղաքականության, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման ու արդյունավետության բարձրացման հիմնահարցեր, որոնց հենքով էլ վերհանվում են ընդերքօգտագործման ընդհանուր բարելավվումն ապահովելու հրատապ խնդիրները: Առաջադրվում է այն պնդումը, որի համաձայն՝ ընդերքօգտագործման բարելավման հիմնական միջոցառումները պետք է միտված լինեն ոլորտի քաղաքականության կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Բանալի բառեր. ընդերքօգտագործման հեռանկարներ, ընդերքօգտագործման օրենսդրաիրավական բարեփոխումներ, բարենպաստ գործարար միջավայրի ապահովում, բնական պաշարների արդյունավետ շահագործում, նորագույն տեխնոլոգիաների քաղաքականություն, հանքարդյունաբերական արտահանվող արտադրանքի որակական բարելավում, արտադրական և տեխնոլոգիական վերազինում, ներդրումային և գործարար միջավայր:

Ներածություն: Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքականության հիմնական ուղղվածությունն ընդերքի պահպանությունն է, արդյունավետ օգտագործումն ու վերարտադրությունն ապահովելը, երկրաբանական վերահսկողությունն իրականացնելը [1]: Հայաստանի Հանրապետությունը հարուստ է մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների պաշարներով, որոնք նպաստում են հանրապետության տնտեսական զարգացմանը: Հանքավայրերի արդյունավետ շահագործումը սերտորեն կապակցված է ընդերքի շահավետ և նպատակային օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հետ: Ուստի՝ ընդերքօգտագործման բարելավման հիմնական միջոցառումները պետք է միտված լինեն ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է և կարող է տրվել օգտագործման իրավունքով: Սակայն պետությունն առայժմ չունի այդ սեփականության ռացիոնալ շահագործ-

ման համար հաստատված տեխնոլոգիական նախագծման նորմեր, հանքավայրերի շահագործման տեխնիկական կանոններ և նորմատիվներ [2]: Դրանց բացակայությունը գործնականում անհնար է դարձնում տվյալ բնագավառում պետությանն ամրագրված խնդիրների իրականացումը, մասնավորապես՝ հանքային հումքի նկատմամբ տնտեսության պահանջների բավարարման նպատակով ընդերքի արդյունավետ համալիր օգտագործման ու պահպանության, ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանելու, ինչպես նաև աշխատանքների կատարման անվտանգության ապահովումը: Ուստի, բնական պաշարների ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնահարցերի համատեքստում առանձնակի կարևորություն է ձեռք բերում նաև ընդերքօգտագործման ընդհանուր բարելավման հիմնական ուղիների ուսումնասիրումն ու նախանշումը, ոլորտային հիմնախնդիրների կարգավորման համար արդեն կատարված աշխատանքների վերհանումն ու այդ հիմքով՝ հեռանկարների նախանշումը: Բնական պաշարների ոլորտի քաղաքականության այդ հիմնահարցերից մեկն էլ ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի օրենսդրական հիմքերի ապահովումն է և հեռանկարների նախանշումը:

Խնդրի դրվածքը: Հայաստանի Հանրապետության ընդերքօգտագործման բնագավառում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք փորձել են լուծել օրենսդրական ճանապարհով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ընդերքօգտագործման ընդհանուր բարելավման հիմնական ուղիները ՀՀ-ում փորձել ենք ուսումնասիրել ընդերքօգտագործման օրենսդրական բարեփոխումների, ոլորտային հիմնախնդիրների համապատկերում ու ոլորտի բարելավման հեռանկարները նախանշելու հենքով և մշակել ոլորտային հիմնախնդիրների կարգավորման առաջարկություններ:

Ընդերքօգտագործմանն առնչվող իրավական բարեփոխումների անհրաժեշտությունը ՀՀ կառավարության կողմից հիմնականում բացահայտվել է 2008 թվականին՝ հիմք ընդունելով շրջակա միջավայրի հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և փորձագետների քննադատությունն այս ոլորտին առչվող օենսդրության և պրակտիկայի անկատարության վերաբերյալ: Արդյունքում՝ 2012 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտան «Ընդերքի մասին» ՀՀ նոր օրենսգիրքը և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2011 թ. նոյեմբերի 28-ի օրենքը: Ուժը կորցրած ճանաչվեցին «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար

տրամադրելու (կոնցեսիայի) մասին» 2002 թ. նոյեմբերի 5-ի օրենքը (որով սահմանված էին մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիները): Օրենսդրական փոփոխություններով՝ արդյունահանված պաշարներից բնօգտագործման վճարի հաշվարկումից անցում է կատարվել իրացման հասույթից կախված ռոյալթիի հաշվարկմանը: Ստացվում է, որ փոփոխությունների արդյունքում բնօգտագործման վճարը և ռոյալթին միավորվել են միասնական հարկատեսակի մեջ, իսկ «բնապահպանական վճարը» վերածվել է բնապահպանական հարկի և 2017 թ. ներառվել է հարկային օրենսգրքում որպես «բնապահպանական հարկ» [3]: Խնդրահարույց կողմերից է նաև այն, որ հասույթը որոշելիս պետությունը հիմք է ընդունում ոչ միայն հանքարդյունահանմամբ ուղղակիորեն պայմանավորված գործունեությունը, այլև վերջնական արտադրանքի արժեքը [4]:

Բացի դրանից՝ ընդերքի նոր օրենսգիրքն առավել միտված է ընդերքօգտագործման ոլորտում պարզեցմանն ու բարենպաստ գործարար միջավայրի ապահովմանը, ընդերքի շահագործման կարգը և կանոնները, ինչպես նաև դրանք շահագործողների իրավունքներն ու պարտականությունները կարգավորելուն, նաև հանքի փակման ընթացակարգերը հստակեցնելուն: Թեև «Ընդերքի մասին» օրենսգիրքում (այսուհետև՝ Օրենսգիրք) կատարվել են որոշակի բարելավումներ, այդուհանդերձ՝ ուշադրությունից դուրս են մնացել ընդերքօգտագործման ընդհանուր բարելավման համար նշանակալի մի շարք խնդիրներ: Այսպես՝ Օրենսգիրքը չի արտացոլել ընդերքի պաշարների՝ հասարակության բոլոր անդամների համընդհանուր բարիք հանդիսանալու և դրանցից ստացվող եկամուտների նկատմամբ բոլոր քաղաքացիների շահերը պաշտպանելու անհրաժեշտությունը: Այն շեղվել է ՀՀ կողմից որդեգրած կայուն զարգացման հայեցակարգից և հաշվի չի առել բնական պաշարների արդյունավետ շահագործման, շրջակա միջավայրի համար առավել բարենպաստ առաջադեմ տեխնոլոգիաների, ընդերքօգտագործման արգելման, շրջակա միջավայրի աղտոտման և այլ հիմնահարցերը: Օրենսգրքով չեն ամրագրվում ընդերքի պաշարների բնական և համալիր օգտագործման նախադրյալներ՝ հաշվի առնելով ինչպես ներկա, այնպես էլ ապագա սերունդների շահերը, սոցիալական արդարությունն ու մարդու իրավունքները: Կարելի է ասել, որ ընդերքօգտագործման համար գրեթե նախատեսված չեն սահմանափակումներ և դրա հիմքում դրված չէ ազգային հարստության շահագործմանն ու դրա արդյունքում ստացվող օգուտների բաշխման ռազմավարություն: Բացակայում են օգտակար հանածոների առավելագույն կորզումը և

մշակումը, ինչպես նաև հանքավայրերի պաշարների համալիր օգտագործումը խրախուսող և առավել առաջադեմ (այդ թվում՝ նաև նվազագույն էկոլոգիական վնաս հասցնող) տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառումը խթանող դրույթներ: Միևնույն ժամանակ՝ անլուծելի է մնում «ապարների կուտակման» հետևանքով բնակչության առողջության և էկոլոգիական վիճակի վատթարացման փոխհատուցման խնդիրը, որը, կարծում ենք, հնարավոր կլինի կարգավորել, փոխհատուցման համապատասխան կառուցակարգեր մշակելու և կիրառելու միջոցով: Հանքարդյունաբերության կողմից բնությանը, տնտեսությանը և բնակչությանը պատճառվող հսկայական վնասները համարժեքորեն չեն փոխհատուցվում մասնավոր շահագործողների կողմից: Բոլոր այդ ծախսերն, ըստ էության, բաժին են հասնում պետությանը և ապագա սերունդներին:

Ընդերքօգտագործման ընդհանուր բարելավման համար իբրև կարևորագույն խնդիր պետք է դիտարկել նաև նոր օրենսգրքում ընդերքօգտագործմամբ զբաղվելու համար չնախատեսված տարածքների ցուցակում անտառներն ու անտառային տարածքները չընդգրկելը, որը լի է էկոլոգիական հետևանքներով, թեև, ինչպես հայտնի է, հանքարդյունաբերության մեծ մասը կապված է հենց անտառային տարածքների հետ:

Ընդերքօգտագործման բարելավման համար հեռանկարային է ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլը՝ ուղղված ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտը ներդրումների համար գրավիչ դարձնելուն: 2013 թ. հոկտեմբերին գործադիրի հավանությանն է արժանացել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներկայացրած «Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» որոշման նախագիծը: Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգի նպատակն է՝ վերհանել ոլորտի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրները և նախանշել դրանց լուծման ուղիները: Համաձայն սույն հայեցակարգի՝ ոլորտի հիմնական խնդիրներն են.

1. ընդերքօգտագործման ոլորտում ներդրումների համար գրավիչ միջավայրի ստեղծումը.

2. առավել շահութաբեր, քիչ ծախսատար և տնտեսության համար կարևոր արտադրատեսակների բացահայտումը.

3. ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների և էկոլոգիապես մաքուր արտադրությունների կազմակերպմանն աջակցությունը:

Հայեցակարգով առաջարկվում է՝

- դիտարկել առավել շահութաբեր և տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող և էներգախնայող արտադրատեսակները,
- աջակցել ընտրված արտադրատեսակների արտադրության կազմակերպմանը,
- պետական աջակցություն ցուցաբերել կազմակերպությունների և արտադրատեսակների համար բանկերի համար ընդունելի բիզնես-ծրագրերի մշակման խնդրում,
- պետականորեն աջակցել տնտեսվարող սուբյեկտներին իրենց բիզնես-ծրագրերի՝ միջազգային ֆինանսական կազմակերպություններին և առանձին ներդրողներին ներկայացման հարցում:

Հայաստանում 600 ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայր կա, որոնցից շուրջ 400-ը տրամադրվել են շահագործման [6]:

Նշված որոշման նախագծի սահմաններում հնարավոր կլինի գործարկել նաև մյուս չշահագործվող հանքավայրերը: ՀՀ կառավարությունը նաև սահմանել է հանքարդյունաբերության ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիրտարկում իրականացնելու և այդ նպատակով վճարի չափերի հաշվարկման ու վճարման կարգերը: Վերջիններս նպատակուղղվում են Հայաստանի ընդերքօգտագործումը Օրենսգրքի նոր պահանջներին համապատասխանեցնելուն: Մշտադիրտարկումները նաև նպատակաուղղվում են հանքարդյունաբերական տարածքների վիճակի մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելուն:

Ընդերքօգտագործման հեռանկարները և ընդհանուր բարելավման հիմնական ուղիները նախանշվում և արտացոլվում են նաև ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության միջնաժամկետ ծախսային ծրագրերում: Համաձայն ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ ընդերքօգտագործման ոլորտի կարևորագույն նպատակներից է ընդերքօգտագործման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության նպատակաուղղումը հետևյալ միջոցառումների իրականացմանը՝

- աջակցություն ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման նպատակով առավել շահութաբեր, տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող և էներգախնայող արտադրատեսակների արտադրության կազմակերպմանը.
- օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման ընթացքում բարձր արդյունավետություն ապահովող տեխնոլոգիաների կիրառության խթանում, ինչն ընդերքի բարձր արտադրողական և համալիր

օգտագործման հնարավորություն կրնձեռի՝ շրջակա միջավայրի վրա ունենալով նվազագույն բացասական ազդեցություն.

- ընդերքօգտագործման ոլորտում արդյունավետության բարձրացման, տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը և օտարերկրյա ներդրումները խթանելու համար կիրականացվի օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների անձնագրերի (քարտեզներ և երկրաբանական փաստագրման առաջնային նյութեր) թվայնացում, իսկ թվայնացված տեղեկությունը կիրապարակվի համապատասխան կայքում:

Նույն ծրագրում, որպես ընդերքօգտագործման ոլորտի գերակայություններ, սահմանվում են՝

1. Հայաստանի տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցում, դրանց արդյունքում ստացված տեղեկատվության հաշվառում, պահպանում և տրամադրում (Համաձայն Օրենսգրքի դրույթների):

2. Ռադիոակտիվ թափոնների փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասագերծում և թաղում (<< կառավարության 2018 թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր) [1]:

Հեռանկարային է նաև երկրաբանական հետախուզության ծավալների ավելացումը՝ հանքավայրերի արդյունավետ շահագործումն ապահովելու նպատակով: Արդյունաբերական ներուժը յուրաքանչյուր երկրի՝ ներքին պաշարներով ապահովվածության կարևորագույն ցուցանիշներից մեկն է, ուստի այժմ մեծ նշանակություն է տրվում արդյունաբերության ոլորտի հատկապես որակական զարգացման հեռանկարին (շեշտը դնելով հանքարդյունաբերական արտադրանքի մշակման որակի բարձրացման սկզբնական սպառման շղթայի ապահովման վրա), որը թույլ կտա ապահովել առկա պաշարների կառավարման արդյունավետության բարձր աստիճան, հետևաբար՝ լրացուցիչ եկամուտներ: Այդ իսկ պատճառով՝ հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը կարևորվում է պետական մակարդակով: Ուստի՝ ընդերքօգտագործման ընդհանուր բարելավման, մասնավորապես՝ ոլորտում արտադրության շարունակականություն և կայուն աճ ապահովելու, դրանով իսկ՝ ոլորտի կայունացմանը նպաստելու հիմնական ուղիներից մեկն էլ ոլորտի խոշոր ընկերություններին ուղղված պետական աջակցության ավելացումն է: Այս խնդրի շրջանակներում նպատակային է նաև կատարելագործել երկրի ներդրումային քաղաքականությունը: Ընդերքօգտագործման բարելավման հիմնական ուղիները

նախանշելիս, հարկավոր է առանձնացնել նաև ոլորտային հետևյալ հիմնախնդիրները.

- Հայաստանում հումքային արտադրատեսակների՝ վերջնական արտադրանքի վերածման շղթային բացակայություն,
- արտադրություն-գիտություն-կրթություն սերտ կապի ու համագործակցության բացակայություն և հետադարձ թույլ կապ,
- պետական աջակցության կառուցակարգերի և գործիքների սահմանափակություն:

Պետք է նշել, որ այս պայմաններում առավել նպատակահարմար է ներդրումների իրականացումը ոչ թե նոր ընկերություն ստեղծելու միջոցով, այլ արդեն գոյություն ունեցող և գործող ընկերություններում ներդրումներ կատարելով: Նման ներդրումները կարող են ուղղվել հատկապես արտադրական և տեխնոլոգիական վերազինմանը, որը կհանգեցնի հանքարդյունաբերական արտահանվող արտադրանքի որակական բարելավմանը, իրական դրամական ծավալի մեծացմանը, երկրում ներքին դրամաշրջանառության աճին՝ իր բոլոր տնտեսական դրական հետևանքներով:

Եզրակացություններ և առաջարկություններ: Այսպիսով՝ ընդերքօգտագործման բարելավումը ընդերքի պահպանության և օգտագործման ոլորտային խնդիրների կարգավորման համալիր առաջնահերթ միջոցառումների իրականացումն է՝ ուղղված ընդերքօգտագործման արդյունավետության բարձրացման, թերությունների վերացման, օրինախախտումների կանխարգելման, ինչպես նաև իրավական դաշտի կատարելագործման նպատակի իրագործմանը:

Մինչև այսօր ՀՀ ընդերքօգտագործման ոլորտում գոյություն չունի հանրապետական, տարածաշրջանային կամ տեղական ծրագիր, հայեցակարգ, որով կսահմանվեր, օրինակ, թե տարեկան որքան հանքաքար կարելի է արդյունահանել, կամ՝ որ հանքերն են ենթակա շահագործման, որոնք պետք է պահպանվեն ապագա սերունդների համար և այլն: Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում առկա են լուրջ հիմնահարցեր, որոնք ինչպես օրենսդրական, այնպես էլ կիրառական մակարդակում հրատապ լուծումներ են պահանջում, որի նպատակն է՝ կանխել, կամ՝ գոնե նվազագույնի հասցնել բնական չվերականգնվող պաշարների անխնա օգտագործումը, ազգային հարստության փոշիացումը, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի աղտոտումը: ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման և տնտեսության մեջ վերջինիս ազդեցությունն ավելացնելու, առկա հիմնախնդիրները լուծելու նպատակով առաջարկվում է.

- մշակել նորագույն տեխնոլոգիաների քաղաքականություն, որի իրագործման համար կարևորվում է հատկապես օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացի ակտիվացումը: Ընդ որում՝ այստեղ առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել ընկերություն-պետություն-օտարերկրյա ներդրող համագործակցությունն ակտիվացնելուն, քանի որ հարկային և այլ դրամական արտոնությունների ազդեցությունն արդեն սպառվել է,

- ապահովել ինտելեկտուալ ներուժի նպատակային օգտագործումը, գիտելիքահենք տնտեսության ստեղծումը: Այս համատեքստում, հատկապես պետք է կարևորել տեխնոպարկերի ստեղծումը, բուհերի և հանքարդյունաբերության ոլորտի գործարարների համագործակցությունը, ինչպես նաև՝ գիտության՝ տվյալ բնագավառում ներգրավվածության ընդլայնմանն ուղղված այլ միջոցառումներ,

- բարելավել ներդրումային (պետական և օտարերկրյա) և գործարար միջավայրը,

- հստակ սահմանել թափոնները. հաշվի առնելով բնապահպանական նկատառումները՝ բացառել հարկային խուսափումները,

- լուծել ապարների կուտակման հետևանքով բնակչության առողջության և էկոլոգիական վիճակի վատթարացման փոխհատուցման խնդիրը՝ մշտադիտարկումներով ստեղծված տեղեկատվական բազայի հիման վրա փոխհատուցման համապատասխան կառուցակարգեր մշակելով,

- արգելել ընդերքօգտագործումը բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ այդ ցանկում նշելով նաև անտառային տարածքները՝ այդ կերպ վեացնելով անտառներն այլ կատեգորիաների տակ «քողարկելու» հնարավորությունը և կանխելով դրա արդյունքում առաջացող հնարավոր էկոլոգիական հետևանքները,

- օրենսդրական դաշտի կիրարկման բարելավման համար կարևոր է նաև ընդերքօգտագործման ոլորտում հանրապետական, տարածաշրջանային կամ տեղական ծրագրի, ռազմավարության կամ հայեցակարգի մշակումն ու ընդունումը,

- մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի արդյունավետ շահագործումն ապահովելու նպատակով՝ հանքաքարի վերամշակման և պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների կորզման ժամանակ կարելի է կիրառել նորագույն տեխնոլոգիաներ, ինչպես նաև կազմակերպել ապրանքային տեսք ստացած մետաղյա ձուլածոների արտադրություն՝ դրանց իրացումից ավելի մեծ ՀՆԱ-ի աճ ապահովելու համար,

- ոլորտում մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով՝ մշակել և կիրառել ներդրողների համար առավել գրավիչ իրավական և տնտեսական կառուցակարգեր, ինչպես նաև ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացնել վարկային և գանձարանային (ֆիսկալ) ճկուն քաղաքականություն՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և ապրանքային տեսք ստացած մետաղյա ձուլածոների արտադրություն կազմակերպելու համար:

Առաջարկված այս միջոցառումները, լինելով ռեսուրսատար (և՛ ժամանակի, և՛ ֆինանսական առումներով), այնուամենայնիվ, զգալիորեն կբարելավեն ընդերքօգտագործման ոլորտը՝ ապահովելով նաև հանքարդյունաբերության, երկրի ողջ տնտեսության որակական զարգացման նախահիմքերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 797-Ն, 10.07.2018, <http://www.irtek.am/views/act.aspx?tid=154423#p8410>

2. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2014-2016 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը <https://www.gov.am/files/docs/1184.pdf>

3. ՀՀ Հարկային օրենսգիրք, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>

4. Հանքարդյունաբերության ոլորտից ավելի շատ հարկեր կհավաքագրվեն, <https://www.ecolur.org/hy/news/mining/-/2633/>

5. <https://www.ecolur.org/hy/news/mining/---/5387/>

ОСНОВНЫЕ СПОСОБЫ ОБЩЕГО УЛУЧШЕНИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ МОЩНОСТИ В РА

ЛИАНА АЙРАПЕТЯН, ДАВИД ПОГОСЯН

Национальный политехнический университет Армении

В статье рассматриваются и освещаются вопросы совершенствования политики РА в сфере недропользования, совершенствования законодательного поля, регулирующего сферу и ее эффективность. Утверждается, что основными мерами по улучшению использования недр должны быть улучшения отраслевой политики и повышение эффективности.

Ключевые слова: перспективы недропользования, законодательные реформы недропользования, обеспечение благоприятной деловой среды, эффективная эксплуатация природных ресурсов, современная технологическая политика, качественное улучшение экспортируемых продуктов горнодобывающей промышленности, промышленная и технологическая модернизация, инвестиционная и деловая среда.

THE MAIN WAYS OF GENERAL IMPROVEMENT OF MINERAL USE IN ARMENIA

LIANA HAYRAPETYAN, DAVIT POGHOSYAN

National Polytechnic University of Armenia

The article examines and highlights the issues of the improvement of the policy of the RA in the field of entrails-use, improvement of the legislative field regulating the sphere and its effectiveness. It is argued that the main measures to improve entrails-use should be ameliorating the sector policy and increasing its efficiency.

Keywords: prospects of entrails-use, legislative reforms of entrails-use, providing a favorable business environment, effective exploitation of natural resources, policy of the latest technologies, qualitative improvement of exported mining products, industrial and technological upgrading, investment and business environment.

*Ներկայացվել է խմբագրություն 17.02.2020
Երաշխավորվել է տպագրության 12.03.2020*